

Այսպիսով, հաշվի առնելով նոր Սահմանադրության առաջադրած խնդիրները, ինչպես նաև մայրաքաղաքի հսկայական դերը ամբողջ երկրի համար, գտնում ենք, որ պետք է մանրամասն քննարկել և ներդնել այն տարբերակը, որը լավագույնս կլուծի կառավարման հետ կապված բոլոր խնդիրները, մույնիսկ եթե դա պահանջի որոշակի փոփոխություններ կատարել Սահմանադրության մեջ:

ԴԱԿԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԶԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանկային համակարգը շուկայական տնտեսության համակարգի կարևորագույն ինստիտուտներից մեկն է, որը հնարավորություն է տալիս շուկայական համակարգի նորմալ կենսագործունեությունն ապահովելու համար: Բանկային համակարգի դերն ու նշանակությունը կարևորվում է նաև այն պարզ պատճառով, որ դրա միջոցով ձևավորվում են շուկայական տնտեսության այլ ինստիտուտներ, որոնք անհրաժեշտ են շուկայական տնտեսության նորմալ կենսագործունեության համար: Բանկային համակարգի ձևավորումը և առավել ևս դրա կայացումը հատկապես կարևոր է անցումային տնտեսություն ունեցող, ինչպես նաև զարգացող երկրների համար, ինչպիսին ներկայումս հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ-ում բանկային համակարգը ձևավորվեց 1993թ.-ից և ձևավորման առաջին իսկ օրերից կրեց էական կորուստներ ու ենթարկվեց զգալի փոփոխությունների: Դրա պատճառները բազմաթիվ էին ու բազմազան՝ սկսած սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններից մինչև քաղաքական անկայունություն ու անկում ապրող տնտեսությունը: Բանկային համակարգը հենց սկզբից ունեցավ նաև ձեռքբերումներ: Ձեռքբերումների շարքին կարելի է դասել այն, որ ստեղծվեցին բազմաթիվ բանկեր, իսկ կորուստներից հատկապես հատկանշական էր այն, որ ինչ արագությամբ ստեղծվում էին հաստատությունները մույն արագությամբ էլ լուծարվում կամ որ ավելի հաճախ էր լինում սնանկանում էին՝ մեծ հարվածի (ֆինանսական) տակ դնելով ավանդատուներին: Բանկային համակարգին զգալի վնաս էր հասցնում նաև փողի արժեզրկման զգալի չափերի հասնող մակարդակը, որի արդյունքում վստահություն չէր ձևավորվում սեփական բանկային համակարգի նկատմամբ և բանկային համակարգի կողմից անհնար էր դառնում իր հաճախորդների սպասարկումը: Այդ էր պատճառը, որ անհրաժեշտություն առաջացավ բանկային համակարգի նկատմամբ իրականացնելու խիստ վերահսկողության, որը ստանձնեց Կենտրոնական բանկը՝ իր վերահսկողության ուղղակի և անուղղակի մեթոդների միջոցով: Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս բանկային համակարգը համարվում է ազատական տնտեսության ազատական համակարգերից մեկը, այնուամենայնիվ դեռևս շատ բարձր է բանկային համակարգի վրա պետության վերահսկողությունը, որն արտահայտվում է ԿԲ-ի կողմից սահմանված պատժամիջոցների կիրառվող համակարգով և բանկային վերահսկողության այլ համակարգերով: Բանկային համակարգը հանդիսանում է տնտեսության կարևոր կառույցներից մեկը, որի գործունեությունից է կախված շատ գործարարների գործունեությունը հետևաբար նաև պետության տնտեսական համակարգի կայունությունը: Այդ առումով անհրաժեշտ է, որ պետությունը անընդհատ ուշադրության կենտրոնում պահի այս համակարգը, սակայն վերահսկողությունը, որը երբեմն անցնում է իր թույլատրելի չափի սահմաններից կարող է կործանարար լինել հետագայում այս համակարգի զարգացման համար:

Այս առումով պետք է փաստել, որ բանկային օրենսդրությունում տեղ են գտել այնպիսի թերություններ, որոնց մասին հնարավոր չէ չխոսել՝ ինչպիսին, օրինակ, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում տեղ գտած թերություններն են: «Բանկային գաղտնիքի մասին» օրենքով բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ անձին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է՝ եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող է տեղյակ լինել այդ ձեռնարկության վերաբերյալ: Միևնույն ժամանակ հաջորդ կետով նշվում է, որ առևտրային բանկերը հանդիսանում են ԿԲ-ի հաճախորդներ, այսինքն՝ ԿԲ-ը կարող է բանկերից պահանջել իր հաճախորդների վերաբերյալ տեղեկություններ և հավաքագրել դրանք ինչ-ինչ նպատակներով: Միևնույն ժամանակ «Առողջապահական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, առողիտ իրականացնող անձն իրավունք ունի ստանալ անհրաժեշտ տեղեկություն առողիտի ենթարկվող անձի, պահանջել այդպիսի տեղեկությունների ստացումը երրորդ անձանցից, ինչպես նաև առողիտի ենթարկվող անձի գիտությամբ զրավոր հարցում անել և երրորդ անձանցից ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Այսինքն ստացվում է, որ նման օրենքի ընդունումը չի երաշխավորում բանկային գաղտնիքը և զուտ ձևական բնույթ է կրում, քանի որ երկու դեպքում էլ հնարավոր է լինում ձեռք բերել տեղեկություններ հաճախորդների վերաբերյալ առանց որևէ դժվարությունների: Նման բացթողումը կանխելու նպատակով անհրաժեշտ է համարվում ուժը կորցրած ճանաչել օրենքի այն դրույթը համաձայն որի բանկային գաղտնիքը կարող է տրամադրվել ԿԲ-ին, և

¹ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, ընդունված 7 հոկտեմբերի 1996թ.-ին, հոդված 4:

սահմանափակել առևտրային բանկերի հաճախորդներին վերաբերվող տեղեկությունների տրամադրումը: Բանկային վերահսկողությունը պետք է իրականացնել առանց առևտրային բանկերի հաճախորդների մասին տեղեկությունների ստացման, եթե հաշվի ենք առնում նաև այն հանգամանքը, որ, որպես կանոն, նման տեղեկատվությունը որևէ կերպ չի առնչվում ԿԲ-ին և նրա իրականացրած գործառնություններին: Այդ իսկ պատճառով նման բացթողումը շտկելու նպատակով նպատակահարմար են համարում, որպեսզի օրենքով նշվեն հատուկ այն դեպքերը, որոնց առկայության դեպքում միայն առևտրային բանկերը պետք է տրամադրեն իրենց հաճախորդների վերաբերյալ տեղեկությունները ԿԲ-ին և այն էլ խիստ սահմանափակումներով:

Միևնույն ժամանակ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում է նաև, որ բանկերը, իրենց գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ ներդրումների վերադարձելիությունն ապահովելու նպատակով, կարող են միմյանց, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարկային կազմակերպությունների հետ փոխարինել կամ միմյանց, ինչպես նաև «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարկային կազմակերպություններին տրամադրել իրենց հաճախորդների վերաբերյալ տեղեկություններ, թեկուզև դրանք բանկային գաղտնիք կազմեն: Այսպիսով, ստացվում է այնպես, որ տեղեկատվությունը օրենքի սահմաններում կարող է արտահոսել տարբեր ֆինանսական կառույցներ, որը վերջ ի վերջո, հանգեցնում է տեղեկատվության հասանելիության բոլոր այս կառույցներին և վերջ ի վերջո բանկային գաղտնիքի անգործունեության կամ վերացման: Միևնույն եթե ուսումնասիրում ենք աշխարհի զարգացած երկրների (մասնավորապես, Շվեյցարական բանկերը) բանկային համակարգը և դրանց գրավչության հիմնական գրավականը, ապա միանգամից պարզ է դառնում, որ աշխարհին այս բանկերը հիմնականում գրավում են իրենց հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման խիստ սահմանափակությունը և իրենց հաճախորդների ծագման ֆինանսական վիճակի վերաբերյալ այլ անձանց տեղեկատվության անհասանելիությունը: «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն բանկային գաղտնիքի մեջ մեղավոր անձինք և կազմակերպությունները պարտավոր են հատուցել խախտման հետևանքով բանկի հաճախորդին պատճառած վնասները լրիվ չափով: Նշված խախտումներն առաջացնում են տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկից մինչև տասն հազարապատիկի չափով և կարող են առաջացնել սահմանված քրեական պատասխանատվություն: Այսպիսով, ստացվում է այնպես, որ ԿԲ-ը կարող է միևնույն անձի նկատմամբ կիրառել տարբեր պատժամիջոցներ և տարբեր չափերով ինչն անշուշտ չի խոսում ո՛չ բանկերի, և ո՛չ էլ այն անձանց շահերից, որոնց կողմից կատարվել է այդ խախտումը: Մեր կարծիքով, նպատակահարմար է սահմանել խախտման բնույթը և դրա նկատմամբ կիրառվող հստակ պատժաչափը, որը հնարավորություն կտա ԿԲ-ին կամ որևէ այլ մարմնի գերծ մնալ ցանկացած սուբյեկտիվ պատժամիջոցների կիրառումից:

Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատժամիջոցներն են համարվում.

ա) նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական,

բ) տուգանք,

գ) բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկում,

դ) լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի համաձայն ԿԲ-ը կարող է օրենսդրության յուրաքանչյուր խախտման համար բանկի և բանկի ղեկավարի նկատմամբ միաժամանակ կիրառել նախազգուշացում՝ խախտումները վերացնելու հանձնարարականով և տուգանք՝ բանկի կամ ղեկավարի նկատմամբ, և (կամ) բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկում: Այսինքն՝ այստեղ ևս առկա է ԿԲ-ի սուբյեկտիվ կամքի դրսևորումը:

Համաձայն նույն օրենքի 63-րդ հոդվածի յուրաքանչյուր խախտման համար բանկից զանձվող տուգանքի չափը սահմանում է ԿԲ-ը, ընդ որում՝

ա) տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար, ԿԲ ներկայացվող հաշվետվություններն ուղացնելու համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը, այսինքն՝ ԿԲ-ը կարող է կիրառել 0-ից մինչև 2.500.000 դրամ տուգանքի չափ,

բ) բանկային օրենսդրության յուրաքանչյուր այլ խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մեկ տոկոսը, այսինքն՝ 0-ից մինչև 500.000 դրամ չափով:

Այսպիսով, կիրառվող տուգանքները վերջ ի վերջո ամբողջությամբ պայմանավորված են ԿԲ-ի քնահաճույքներից և այս կամ այն բանկի նկատմամբ ղեկավարության ունեցած վերաբերմունքից: Ուստի, ավելի ճիշտ կլինի օրենքով սահմանվեն պատժամիջոցները և դրանց նկատմամբ հստակ սահմանված պատժամիջոցների չափերը:

Չնայած այն հանգամանքին, որ բանկերը ներկայումս հանդիսանում են մեր տնտեսության ամենաավտոմատացված համակարգերից մեկը, բայց նրանց նկատմամբ կիրառվող համակարգերը չունեն նույնչափ ավտոմատացված և դասակարգված բնույթ, քանի որ պատժամիջոցների համակարգի ներկայիս համակարգը լի է մարդկային գործոնի սուբյեկտիվ մոտեցումների կիրառմամբ: